

ՏԱՄԱՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնները համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԵՐԵՎԱՆ 1890 ԹԻՒՎԱՆԻՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոգրամայով: Մեր ստանում ենք սեփական հետադարձ փոխարկները:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ»-ը կարելի է ԽՐԱԿԱՆԱԿԱՆ (Խմբագրատան և Խմբագրատան փոխարկների միջոցով):
Նույն, Թիֆլիսի տանը:
Կայսերական ռուս լեզուի «ՄՇԱԿ»-ը գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով: ТИФЛИСЪ, Редакция газетъ «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ձեռքի աշխատանքի մասին. Մոսկվայի հայ հասարակութեան կարծիքը. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի կարծիքը խոյնաշարի մասին. Նամակ Թիֆլիսից. Արտաքին լուրեր. —ՀԱՆՈՒԹԻՒՆԵՐ. —ԲՈՐՈՍ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անարկներ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՁԵՌՔԻ ԱՇԽԱՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Հետաքրքիր է, թէ ինչ աստիճանի տարածված է արհեստագործական ուսումը Եւրոպայում: Ձեռնարկը երևում է, որ Ֆինլանդիայի, որին պատկանում է զործի ձեռնարկությունը ամբողջ Եւրոպայում, դեռ 1866 թվականի օրենքով ձեռքի աշխատանքը մտցրել թէ բոլոր տարրական դպրոցները և թէ ուսուցչական սեմինարիաները, իբրև անհրաժեշտ դասական դպրոց առարկայ: Եւ այժմ այնտեղ, չէ հաշվելով բարձրագույն ժողովրդական դպրոցները, ուր մտցրած է ձեռքի զբաղմունքը, կան 20-ի չափ մասնագիտական դպրոցներ, որոնց վրա կառավարությունը տարեկան ծախսում է միլիոն թուրք մաս 200 հազար ռուբլի: Ֆրանսիայում ձեռքի աշխատանքը մտցրած է, բացի հարկաւոր ուսումնականներից մանկահասակի համար, բացի 250 բարձր ժողովրդական դպրոցներից և 450 քրտոցներից դասընթացներից, որտեղ ձեռքի աշխատանքը դասաւանդվում է, որպէս փչեղակ— 459 ուրիշ ժողովրդական դպրոցներում ու 180 ուսուցչական սեմինարիաներում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ

IV

—Խացի փարա չունենք, աղա.
—Մեր օլուխ չօլուխ անօթի են.
—Մեր մալ տարան, մեր տուն արեցին, մեզ դուրսը զգցին.
—Փարա տուէր, աղա, գլխուդ զուբբան, մեր վաթան գնանք. անօթի կը մտնինք...
Այս պոէզիան և դրանից աւելի արտաճմիկ խօսքեր են լսում սովորաբար, երբ ներս են մտնում «Մշակ» խմբագրատան դռնից: Իսկ այդ խօսքերը արտասուլից աչքերով և այրված սրտով արտասանողները թիւրքաց Հայաստանի զանազան կողմերից Թիֆլիս եկող թշուառներն են, որոնք տուն, տեղ թողնելով, և ունենալով յոյսերով խաղաղ Մուշից, Ալաշկերտից, Շատախից, Վանից, Իրադեհերից և Հայաստանի յետ ընկած ուրիշ անկիւններից վազում են դէպի մեծանուն Թիֆլիսը՝ երեսկայելով թէ

միմարիաներում: 1882 թվականի օրենքով ձեռքի զբաղմունքը պարտաւորեցուցիչ առարկայ է դարձրած Ֆրանսիայում բոլոր ընդհանուր դպրոցները: Հիմնարկութիւնների մէջ: Դա նախ և առաջ կան դրա համար ընկերութիւններ, 4 մասնագիտական դպրոց և, բացի դրանից, նա մտցրած է բարձրագույն տարրական դպրոցների, 11 գիմնազիաների և 13 բնական դպրոցների մէջ: Գերմանիայում, ուր ձեռքի աշխատանքը դեռ ևս պարտաւորեցուցիչ չէ համարվում ուսումնականներում, ունի, սակայն, իր ընդարձակ ընկերութիւնը, որտեղ անդամների թիւը հասնում է 12,000-ի և որը (ընկերութիւնը) ունի 180 դպրոցներ, 5500 աշակերտներով: Նոյնպէս և Շվեյցարիայում, ուր ձեռքի աշխատանքը նմանապէս պարտաւորեցուցիչ չէ, —սակայն նա մտցրած է 1000-ից աւելի տարրական դպրոցների, բարձրագույն սեմինարիաների, ինչպէս և երկու համալսարանների մէջ: Նշանաւոր է մանաւանդ այնտեղ Նէտեման անվարձ սեմինարիան, որը ամբողջ Եւրոպայի, ինչպէս և Ռուսաստանի համար վարդապետ է, ինչ դարձել է ընդհանուր միջնակարգի կենտրոնական հիմնարկութիւն: Նոյնը կարելի է ասել և բոլոր մնացած պետութիւնների մասին: Ռուսաստանում, օրինակ, գոյութիւն ունեցող 75 ուսուցչական սեմինարիաներից, ինստիտուտներից և ուսումնականներից, 51-ի մէջ մտցրած է ձեռքի աշխատանքը, որոնք բաց են թողնում միմյանց վրա միջին թուով տարեկան 13 ուսուցիչ (դրանցից 35-ի մէջ զբաղմունքները պարտաւորական են): Գետոյ, ձեռքի աշխատանքը չափազանց տարածված է քաղաքային, գաւառական (ու զգուշ) և տարրական ուսումնականներում: Չը հաշվելով իրական դպրոցները, որոնց մասին առ. այժմ ճիշդ

այնտեղ բարի և մեծ մարդիկ իրանց ցաւերին դարման կանեն, իրանց այրված սրտերը կամօքեն, կը միմարեն...
Եւ Թիֆլիսի բոլոր անկիւններից, թէ վաճառականը, թէ վարժապետը, թէ հողերականը, թէ հարուստը և թէ աղքատը՝ այդ բոլոր մերկանօթի, յուսահատ պանդուխտներին «Մշակ» խմբագրատան ճանապարհն են ցոյց տալիս, ունայն յոյսերով խաղելով այդ միամիտներին, թէ այնտեղ ամեն բան կանեն, ամենքին կօշնեն, ամենքի վէրքին էլ սպեղանի կը դնեն...
Եւ ահա ամեն օր մարդ զփաղդութիւն ունի իր առաջ տեսնելու կամ վաթսուս տարեկան, մէջքը ծռած, աչքերը մարած ծերունիներ, որ զողողվում ձեռքերը մեկնած օգնութիւն են խնդրում, կամ քաջառողջ տղամարդիկ, որոնք հինգ վեց հարկեր են խնդրում, որ տանեն իրանց պարտքը թափեն և իրանց ապրանքը վախառուի ու քուրդի ձեռքից ազատեն, կամ իրանց մեկութիւնը ցնցողութեամբ պատած հայաստանի միասին լաց են լինում, և չեն էլ կարողանում ասել թէ ինչ են ուզում և ինչ են չինում Թիֆլիսում, որոնք իրանց համագիւղացիների հետ

տեղեկութիւններ չը կան, ձեռքի զբաղմունքը մտցրած է 61 քաղաքային դպրոցներում և 220 ուսումնականներում: Ռուսաստանում, ուրիշ խօսքով ասած, գոյութիւն ունեցող քաղաքային դպրոցների աշակերտներից մի երրորդականը և գիւղական դպրոցների աշակերտներից աւելի քան թէ մի քառորդը զբաղված են այժմ զանազան արհեստներով: Առաջինների վրա միջին թուով ծախսվում է 1060 ռուբլի, իսկ երկրորդների վրա—340: Այդպէս ուրեմն, Ռուսաստանի մէջ կան այժմ 400-ի չափ զանազան ուսումնականներ, որտեղ ձեռքի աշխատանքով զբաղված են 5000 աշակերտներ, տեղեկութիւնը նրանց վրա իւրաքանչիւր տարի ծախսում է մօտ 150 հազար ռուբլի:

Վերս բերած թւերը, կարծում ենք, պարզ և ճշգրտաւ պատշաճ են, թէ ինչ աստիճանի հասունացած է այժմ Եւրոպայի մէջ արհեստագործական ուսման անհրաժեշտութիւնը դարձաբար ժողովրդի համար: Նոյն տեղեկութիւններից երևում է, որ մի քանի երկրների մէջ, օրինակ Գերմանիայի, Շվեյցարիայի մէջ, ձեռքի աշխատանքը թէև դեռ ևս չէ մտցրած, իբրև անհրաժեշտ առարկայ, —սակայն ուրիշ տեղերում, օրինակ Ֆինլանդիայի մէջ նրա անհրաժեշտութիւնը աւելի քան կանգնել է մէջ այնքան անպատեհելի է դարձած, նրա հարկաւորութեան դադարձը ժողովրդի համար այնքան հասունացել է, որ նա մտցրած է, իբրև անհրաժեշտ էլ և մենք նրա լուսաւորութեան համար դասաւանդող աշակերտների սխտեմայի մէջ:

Ձեռնարկողի կարծիքով, երեք հանգամանքներ առաջ բերին, ձեռքի աշխատանքի անհրաժեշտութեան հարցը հասարակութեան գիտակցութեան մէջ: Առաջինը՝ ժողովրդի մէջ արհեստների ընկած ընդհանուր վիճակը: Երկրորդը՝ աշակերտների ֆիզիկական թուլութեան հանգամանքը, նրանց մտաւորական յոգնածութեան հետ զուգընթաց և երրորդը՝ ֆիզիկական աշխատանքի պարտաւորականութեան և օրինաւորութեան դադարի մարդու համար: Այդ դիտարկութիւններից առաջինը և երկրորդը, ինչպէս տեսնում է ընթերցողը, ճիշդ գործնական ընտելութիւն ունեն և դուրս են կանչված կենցաղի անողորմ լոգիկայի թելադրութեամբ, իսկ երրորդը, վերջին տեսակետը, թէ օրինական է և դուրս է բերված ընդհանուր փիլիսոփայական դիտարկութիւնների միջնորդութեամբ:

Վերին աստիճանի հետաքրքիր է Միւնխենի կենդանի մասնագիտական յանձնաժողովի կարծիքը ձեռքի աշխատանքի կարեւորութեան և նշանակութեան մասին տարրական դպրոցներ

ի համար: Եւ ամբողջութեամբ բերում են այդ կարծիքը թարգմանաբար այստեղ՝ «Ձեռքի աշխատանքը—ասում է յանձնաժողովը—ամեն կողմից ձեռնառու է մեր երիտասարդների համար. նա նպաստում է առաջինը նրանց անհատականութեան ներդաշնակ զարգացմանը, վարժեցնելով նրանց ձեռքերը, դարձնելով նրանց մէջ ճարտարութիւն, ընտրողականութիւն և ֆիզիկական ոյժ. նա ամրապնդում է մտքի կարողութիւնը, նրանց կամքը և բնաւորութիւնը: Երկրորդը՝ նա ներկայացնում է մի շատ բարեբար հակաշին միջոց երեխաների մտաւորական յոգնածութեանը դէմ և ընդունակ է դարձնում նրանց ընդլիարկել այդ յոգնածութեանը: Երրորդը՝ նա դարձնում է նրանց արտաքին զգայարանները, սրելով նրանց ուշադրութիւնը, բացելով նրանց դիտողութիւնը, ձեռքի հասկացողութիւնը, գեղեցիկ ճաշակը: Չորրորդը՝ ընտելացնում է նրանց տեղական աշխատանքի, տալով նրանց կամքի ոյժ, համբերութիւն, տոկոսնութիւն, սովորեցնելով ճշգրտութեան, զգուշութեան և խստակութեան: Հինգերորդը. ձեռքի աշխատանքը հասցնում է և ուրիշ բարեպտուղ հետեանքների. աշակերտները ձեռք են բերում ճշմարիտ և ճիշդ տեղեկութիւններ և գիտութիւններ այն բոլոր նիւթերի մասին, որոնցից շինված են նրանց շրջապատող բազմաթիւ առարկաները իրանց աների մէջ: Վեցերորդը. նա միջոց է տալիս օգուտով—թէ նրանց համար և թէ առհասարակ—գործադրելու հասկացողութիւնը, աշխատանքի, աշխատանքի դասերից և խաղերից ազատ ժամանակը, և այլն, և այլն: Վերջապէս, ձեռքի աշխատանքը, պատասխանելով աշակերտներից օգտակար աշխատանքներ ընտանիքի համար, միջոց է տալիս մի և նոյն ժամանակ երկրի արհեստագործական և գեղատեսիլ արհեստների թէ ծաղկմանը և թէ տարածմանը»:

Ձեռնարկողը, օր. Եւ իմաստով, իր գեղացուի վերջին տարի ընկերութեան ժողովում վերջացնում է հետևեալ ցանկութիւններով: Եւ կարծում ենք, այդ առաջարկութիւնները նոյնպէս հետաքրքիր են: Նա առաջարկում է—առաջինը՝ աշխատել կամաց-կամաց, աստիճանաբար մտցնել ձեռքի աշխատանքը ընկերութեան բոլոր դպրոցներում: Երկրորդը՝ ձեռնառնել ինչ, իր վրա վերցնելով անհրաժեշտ ծախսերի և պիտույքների հոգը, հիմնելու մի ընդհանուր ուսուցչական սեմինարիա խորհրդով, ուր քաղաքային դպրոցների թէ ուսուցիչները և թէ կրն-ուսուցիչները կարողանային ձրի ուսումնասիրել ձեռքի աշխատանքը՝ դպրոցներում յետոյ դասաւանդելու համար: Երրորդը՝ խնդրել նախադասական և գաւառա-

թէ եկել էին, բայց և այնպէս չեն խրատվում, և տարուց տարի այդպիսի թշուառ եկեղեցիների թիւը ոչ թէ միայն չէ պակասում, այլ աւելանում է...

Տարիներից, տասնեակ տարիներից է վեր թիւրքահայաստանցի ընտելացել է պանդուխտութեան և մուրացկանութեան: Վանեցի, մշեցի, արաշկերացի առանց կարմրելու, առանց մի փոքր ցաւ դալու, փոխանակ իր հարստահարողի դէմ բողոքելու, փոխանակ իր անհաւատկարար ասպակ տալու, փոխանակ իր տունը ընդհանուր դէմ գնալու, օտրեալաբար տանում է բոլոր անպատուութիւնները, և ձեռքը մի օր և է թուլթ կամ աղբաւորի բռնած քաղաքից քաղաք է թափառում, և մուրացկանութիւն է անում... Իսկ թիւրքահայաստանցի զանազան վարդապետներն ու եպիսկոպոսները շատ դժգոյս են ամեն մի դիմողի ձեռքը այդպիսի թղթեր տալու համար: Կը դիմի վանի, Բագրատի, Մուշի կամ մի այլ տեղի յաջորդին կամ առաջնորդին մի թշուառ գիւղացի և ահա այդ առաջնորդը կամ յաջորդը, փոխանակ համոզելու այդպիսիներին չը հեռանալ բուն հայրենիքից, փոխանակ սովորեցնելու նրան իր յոյսը իր անձի և իր հարեանի վրա դը-

Մտերացկանութեամբ Է ուղղման գործը գլխի
թշուառ վիճակից և Կէ հանկանում որ մտ
ցկանը միշտ մտերացկան կը մնայ...

